ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Լրամշակված տարբերակ

Կ-004-17.08.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերության «կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով» բառերը փոխարինել «, բնակելի տներով կամ այլ տարածքներով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «բնակելի թաղամասերում կամ համալիրներում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից անհատական բնակելի տան, շինությունների կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, եթե անհատական բնակելի տունը, շինությունները կամ այլ տարածքները օտարվել են դրանց ավարտական ակտի ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 160-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում» բառերը հանել և «անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքում» բառերը,

2. 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկը՝

ա. 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում,

բ. 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում,

գ. 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ երրորդ գոտում,

դ. 2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում չնշված գոտիներում:»,

3. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկով կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման հիման վրա վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկով հայտարարագրած եկամտային հարկի պարտավորության փոփոխության դեպքում կատարվում է տվյալ ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող (վերադարձված) գումարի վերահաշվարկ՝ Կառավարության սահմանած կարգով:»,

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ մասերով.

«8. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները կիրառվում են նաև բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողի հետ 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա բնակարան ձեռք բերելու, ինչպես նաև կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողի հետ նույն ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների նկատմամբ:

9. Բազմաբնակարան բնակելի շենքի կամ անհատական բնակելի տան կառուցապատողի հետ բնակարանի կամ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական անձից բնակարան

կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները սույն հոդվածով սահմանված կարգով վերադարձման ենթակա չեն:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենսգրքի 160-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասով նախատեսված դեպքերում եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին վերադարձվում է Կառավարության սահմանած կարգով՝ 2023 թվականի հունվարի 1-ից (այդ թվում՝ 2023 թվականի հունվարի 1-ին նախորդող ժամանակահատվածի մասով):

3. Անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձինք ազատվում են 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անհատական բնակելի տան, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամտից եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից, ինչպես նաև այդ մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

Երկրորդ ընթերցում
Կ-004-17.08.2021-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերության «կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համայիրներում՝ բնակելի տներով» բառերը փոխարինել «, բնակելի տներով կամ այլ տարածքներով» բառերով: ~~160-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.~~

Հոդված 2. Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «բնակելի թաղամասերում կամ համայիրներում» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. նվազեցվող եկամուտներ չեն համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից անհատական բնակելի տան, շինությունների կամ այլ տարածքների (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների)՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները, եթե անհատական բնակելի տունը, շինությունները կամ այլ տարածքները օտարվել են դրանց ավարտական ակտի ամսաթիվը ներառող հարկային տարվան հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում:»:

Հոդված 4. Օրենսգրքի 160-րդ հոդվածի՝

5. 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համայիրներում» բառերը հանել և «անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռ-

նարկատեր հանդիսացող կառուցապատողից» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքում» բառերը,

6. 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետ.

«4) հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկը՝

ա. 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում,

բ. 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում,

գ. 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ երրորդ գոտում,

դ. 2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ սույն կետի «ա», «բ» եւ «գ» ենթակետերում չնշված գոտիներում:»:

7. 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկով կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման հիման վրա վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկով հայտարարագրած եկամտային հարկի պարտավորության փոփոխության դեպքում կատարվում է տվյալ ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող (վերադարձված) գումարի վերահաշվարկ՝ Կառավարության սահմանած կարգով:»:

8. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ մասերով.

«8. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները կիրառվում են նաև բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողի հետ 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա բնակարան ձեռք բերելու, ինչպես նաև կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողի հետ նույն ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների նկատմամբ:

9. Բազմաբնակարան բնակելի շենքի կամ անհատական բնակելի տան կառուցապատողի հետ բնակարանի կամ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական անձից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները սույն հոդվածով սահմանված կարգով վերադարձման ենթակա չեն:»:

Հոդված 5~~2~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

1. Սույն ~~օրենքով~~ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենսգրքի 160-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասով նախատեսված դեպքերում եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին վերադարձվում է Կառավարության սահմանած կարգով՝ 2023 թվականի հունվարի 1-ից (այդ թվում՝ 2023 թվականի հունվարի 1-ին նախորդող ժամանակահատվածի մասով):

3. Անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձինք ազատվում են 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անհատական բնակելի տան, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց) կամ այլ տարածքների՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամտից եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից, ինչպես նաև այդ մասով Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված տույժերից և տուգանքներից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-004-17.08.2021-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 1.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Առաջարկվում է նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «փոփոխություններ և լրացումներ» բառերով:	Ընդունվել է: Նախագծի վերնագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերության «կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով» բառերը փոխարինել «, բնակելի տներով կամ այլ տարածքներով» բառերով:	Ընդունվել է: Խնդիրը կայանում է նրանում, որ գործող օրենսդրությամբ «բնակելի թաղամաս» կամ «բնակելի համալիր» հասկացությունները սահմանված չեն և Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթի գործնականում կիրառության ժամանակ խնդիրներ են առաջանում:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Առաջարկվում է կարգավորել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող	Ընդունվել է: Նախագծում կատարվել են	Ընդունվել է:

			ֆիզիկական անձ կառուցապատողներից կողմից սեփական կարիքների համար կառուցված անհատական բնակելի տների հարկման հետ կապված խնդիրները: Մասնավորապես, Հարկային օրենսգրքի համաձայն՝ բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից բնակելի կամ այլ տարածքների՝ այլ ֆիզիկական անձին օտարումից ստացվող եկամուտները հարկվում են եկամտային հարկով՝ 20 տոկոս դրույքաչափով: Խնդիրը կայանում է նրանում, որ գործող օրենսդրությամբ «բնակելի թաղամաս» կամ «բնակելի համալիր» հասկացությունները սահմանված չեն, ինչի արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ կառուցապատողներից կողմից իրենց սեփական կարիքների համար կառուցված անհատական բնակարանները վաճառելու դեպքում այդ եկամուտները հարկվում են եկամտային հարկով: Առաջարկվում է Հարկային օրենսգրքում կատարվող փոփոխություններով սահմանել, որ՝ ա) 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 1-ը	համապատասխան լրացումներ:	

			կատարված նմանատիպ գործարքների դեպքում ֆիզիկական անձինք ազատվում են եկամտային հարկի գծով հարկային պարտավորություններից (նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մաս), բ) 2022 թվականի հունվարի 1-ից հետո եկամտային հարկով հարկման ենթակա են լինելու անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձի կողմից անհատական բնակելի տան օտարու-մից ստացվող եկամուտները, եթե անհատական բնակելի տունը օտարվել են դրա գծով ավարտական ակտի տրամադրման օրը ներառող հաշվետու տարվան հաջորդող երկու տարիների ընթացքում (նախագծի 3-րդ հոդված): Միաժամանակ, վերոնշյալ առաջարկության ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել նաև Հարկային օրենսգրքի եկամտային հարկի բաժնի այլ հոդվածներում, ինչով պայմանավորված նախագծում լրացվել են նոր հոդվածներ:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետ	Առաջարկվում է ՀՀ հարկային օրենագրքի 160-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում» բառերը հանել և	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

			«անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքում» բառերը:		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետ	Առաջարկվում է ՀՀ հարկային օրենագրքի 160-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. Սույն հոդվածով սահմանված գումարները վերադարձնելուց հետո համապատասխան եռամսյակի ամիսների համար հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ճշտված (պարզեցված) հաշվարկով կամ ստուգման արդյունքում կամ դատարանի որոշման կամ բողոքարկման հանձնաժողովի որոշման հիման վրա վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով նախկինում հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկով հայտարարագրած եկամտային հարկի պարտավորության փոփոխության դեպքում կատարվում է տվյալ ֆիզիկական անձին, սույն հոդվածի համաձայն, եկամտային հարկի վերադարձվող (վերադարձված) գումարի վերահաշվարկ՝ Կառավարության սահմանած կարգով:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետ	Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածը լրացնել	Ընդունվել է: Նախագծում կատարվել են	Ընդունվել է:

			հետևյալ խմբագրությամբ 8-րդ մասով. «8. Սույն հոդվածով սահմանված կարգավորումները կիրառվում են նաև բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողի հետ 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ բնակարանի կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա բնակարան ձեռք բերելու, ինչպես նաև կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողի հետ նույն ժամանակահատվածում կնքված և պետական գրանցում ստացած՝ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի հիման վրա անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների նկատմամբ:»	համապատասխան փոփոխություն:	

7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետ	Առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով. «Բազմաբնակարան բնակելի շենքի կամ անհատական բնակելի տան կառուցապատողի հետ բնակարանի կամ անհատական բնակելի տան կառուցապատման իրավունքի ձեռք բերման պայմանագրի կողմ հանդիսացող ֆիզիկական անձից բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու նպատակով ստացված հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարները սույն հոդվածով սահմանված կարգով վերադարձման ենթակա չեն:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածում՝ 1) «օրենքով» բառը փոխարինել «օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով» բառերով, 2) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով. «2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ կետով Օրենսգրքի 160-րդ հոդվածում լրացված 8-րդ մասով նախատեսված դեպքերում եկամտային հարկը վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձին վերադարձվում է Կառավարության սահմանած կարգով՝ 2023 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

9.	ՀՀ կառավարություն	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է ՀՀ ԱԺ քննարկմանը ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի հետ քննարկել նաև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:
10.	ՀՀ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Առաջարկվում է փոփոխություններ և կատարել ՀՀ հարկային օրենսգրքում և նվազեցնել բնակարան կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու գործարքի պայմանագրային արժեքի 55 միլիոն դրամ առավելագույն շեմը և յուրաքանչյուր եռամսյակի համար առավելագույնը 1.5 միլիոն դրամի չափով գումար վերադարձնելու շեմը՝ սահմանելով համապատասխանաբար գործարքի պայմանագրային արժեքի 35 միլիոն դրամ առավելագույն շեմ և յուրաքանչյուր եռամսյակի համար առավելագույնը 750 հազար դրամի չափով գումար վերադարձնելու շեմ: Միաժամանակ, առաջարկվում է ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ երրորդ գոտում և այլ գոտիների	Չի ընդունվել: Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ երրորդ և այլ գոտիներում գտնվող գույքերի մասով եկամտային հարկի վերադարձման համակարգի կիրառությունը շարունակելու առաջարկությունը չի բխում նախագծի առջև դրված հիմնական նպատակադրումից, այն է՝ նպաստել քաղաքաշինական ու տնտեսական առումներով հանրապետության տարածքների համաչափ զարգացմանը, քանի որ Երևան քաղաքի երրորդ և մնացած գոտիների համար եկամտային հարկի վերադարձի համակարգը պահպանելու հետևանքը լինելու է այն, որ կառուցապատումը շարունակվելու է	Չի ընդունվել:

			մասով սահմանափակում կիրառելու վերաբերյալ դրույթները և պահպանել միայն Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ առաջին և երկրորդ գոտիների մասով սահմանափակում կիրառելու վերաբերյալ դրույթները:	իրականացվել Երևան քաղաքի վարչական սահմաններում: Ընդ որում, հարկ է նկատել, որ նույնիսկ շեմերը նվազեցնելու առաջարկության ընդունման պարագայում կառուցապատման ծրագրերի հիմնական մասը կշարունակվի իրականացվել Երևան քաղաքում՝ ընդամենը կառուցապատողները կսկսեն ավելի փոքր մակերեսներով բնակարաններ կառուցել, իսկ ֆիզիկական անձինք, անկախ բնակարանային կարիք ունենալու հանգամանքից, կգնեն դրանք: Ինչ վերաբերում է ներկայացված նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ եկամտային հարկին էլ ավելի սոցիալական ուղղվածություն հաղորդելուն, ապա ինչպես ներկայացրել ենք ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հիմնավորմամբ, գտնում	

				ենք, որ այս համակարգի կիրառության հարցը քննարկելիս անհրաժեշտ է համակարգը դիտարկել բյուջետային գործընթացի շրջանակներում սոցիալական նշանակությամբ պետական աջակցության ծրագրերի ընդհանուր համատեքստում: Այսինքն, եթե նպատակ է դրվում լուծել բնակարանային կարիք ունեցող անձանց բնակարանի խնդիրը, ապա ավելի արդյունավետ և նպատակահարմար է այն իրականացնել բյուջետային գործընթացի շրջանակներում, որի պարագայում աջակցությունը դառնում է ավելի հասցեական: Միաժամանակ, քննարկման ներկայացված նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղ հանդիսացող շինարարության ոլորտի համար եկամտային հարկի վերադարձման համակարգի կարևոր դերակատարության	

				հետ կապված դիտարկման վերաբերյալ հայտնում ենք, որ նշյալ հանգամանքով է պայմանավորված նաև այն, որ համակարգը ամբողջությամբ չի վերացվում, այլ սահմանափակումներ են կիրառվում միայն Երևան քաղաքի վարչական տարածքում կառուցվող անշարժ գույքի մասով:	